9. ՍԻՆԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹ

Կէղի, չէղի մե թագավորմ կէղի։ Թագավորին քառսուն տղա կէղի։

Թագավոր կեսա.— Ես պտի էրթամ էն թագավորին օր քառսուն ախչիկ ունի, ուղիմ իմ տղեքներուն։

Գելի կէրթա, շատ կէրթա, քիչ կէրթա, դևի մե ռաստ գիգա. դևեն զԹագավոր կուտա։

Քառսուն ախպրտիք կեսին. «Ելեք էրթանք մեր պապ հ՝անդընցավ, սանք գե՞լ կերավ, գազա՞ն կերավ, սանք իմա՞լ էղավ»։

Ախպրտիք էլան էրթան, էն պզտիկ ախպեր, էսին, չտանինք, էն պճիկ ա, իդրա ինչ իր՞ք է օր տանինք։

Պճիկ ախպեր կեսա.— Չէ՛, իլահի ես լէ պտի գամ։

Ինչ կէնին, չէնին, պզտիկ ախպոր վրեն չեն կենա, կեսին. «Ախպրտիք, ինդրան լէ տանինք, մըզի կուլլխութեն կէնա, կահվա կէփա, մեր ծիաներուն սեյիսութեն կէնա, թը իգա»։

Գելին քառսուն ախպեր լէ կէրթան։ Կէրթան մե խանի մը ռաստ գիգան։ Զուրանց ծիանք կքաշին նե, օթևան կէղնին մէջ խանին։

Պղտիկ ախպեր կաչքա օր կրակ չկա, օր զատ բան էփա ուրին։ Գելի կէրթա օր տեսի, հանդե կրակ մե կերևա. դեմ կառնի կէրթա, կէրթա կրակի մոտ, տեսի օր քառսուն կանթեն բառոշ վրը կրակին ա, քառսուն դև լէ պառկուկ ին հ՝ոգի։

Տղեն կվերցու բառոշ դնա դեն, զկրակ կհանա։

Իդահախս դևաներ կեսին.— Դու ի՞մա՞լ մարդ իս, օր դու ղէղ

բառոշ վերցցիր թոնդրան վրեն. մենք քառսուն՝ չկրնինք վերցուցենք։ Դու իմա՞լ մարդ իս օր վերցուցիր։ Դու պտի իդաս էրթանք Քաջանց թագավորի քառսուն ախչիկ դու պտի առնիս մըզի դաս, թը չէ՝ քու գլոխ կզարգինք։

Կառնին կէրթան, կէրթան էդ թագավորի քոշկ ու սարին օթևան կէղին։ Դևստանք կեսին.— Դե տղա, իմա՞լ փանցրնանք։

Տղեն կեսա.— Բերեք ոըքթա զարդեք։

Կեսին.— Մենք չկարող ինք զարգինք։

Տղեն կեսա.— Բերեք ես կզարդիմ։

Տղեն կբերա սըքթեք կառնա, զոմփով կզարնա սըքթեք պատին, ինք կփանցրնա, կելի կնստի վըր իրքին, կեսա.— Դե դուք մեկ մեկ արեք։

Մեկ մեկ դելին, գլոխ կկտրա, կթալա սարից։ Էդմլա քառսունի գլոխ լէ կկտրա, կթալա թագավորի սարից։ Դևանք գինին թը ուրանք մեկ մեկ գէլին կէրթան մըշ քառսուն ախչիկներուն։ Տզեն ա, քառսունի անգընջներ լէ կկտրա կթալա հադուբեն։

Տղեն գելի կէրթա քառսուն ախչիկ օր պառկուկ ին, ընդոնց հ՚օդեն, քառսուն ախչիկներուն մատնուքներն կէցկա մատ, կնշանա ուր ախպրտոց, պզտիկ ախչիկ լէ կնշանե ուրին, զերես կպաքա. ուր մատնիկ կէցկա ախչրկա մատ ու դելի գիգա ախպրտոց մոտ։

Ախպրտիք դեռ քնուկ ին, խաբար չունին ուրնցնեն, չգինան ինչ դավի ա։ Ախպրտիք խաց կուտին։

Թագավոր դիմանա թը քառսուն դևեն սպանած ին, դալալ գիտա խանչել, կեսա. «Իդա դևեք վո՞ն ա սպանի թ՚ուզա՝ ես իտամ ուրին»։

Քաղաք քաղքով գիգան, էն կեսա. «Ես իմ սպանի», էն կեսա. «Ես իմ սպանի»։ Թագավոր կեսա.

— Չէ, դուք սպանող չիք, դու չկարաք սպանիք, էն օր սպաներ ա քաջ ա։ Թագավոր կեսա.— Քառսուն ախպեր հանդե էկեր ա իմ սնորի մեջ դրեր ա, գացեք ընդրանց բերեք։

Գիդան զէն ախպրտիք կտանին, պզտիկ ախպոր կեսին, էն պզտիկ ա չգինա, մեր ծիաներուն դարման գիտա, էնի ի՞նչ գինա, մըզի կերակուլ կէփա։

Ախպրտիք գիգան, էն կեսա՝ «Ես իմ սպանե», էն կեսա՝ «Ես իմ սպանե», «Հըմլա ինք սպանե, հըմլա ինք սպանե»։

Թագավոր կեսա.— Դու սուտ կեսիք, դուք սպանող չիք։— Թագավոր կեսա.— Գացեք պզտիկ ախպեր բերեք։

Կէրթան պզտիկ ախպեր բերին։

Պզտիկ ախպեր կեսա.— Սպանող ես իմ։

Թագավոր կեսա.— Դու իմա՞լ սպաներ ես։

Կեսա.— Սըքթեք զոմփերով զարգեր իմ պատ, դևեստանք մեկ մեկ հաներ իմ, սպաներ իմ, թե չավատաս՝ հանդե անգնջներ։ Անգրջներ կթափա թագավորի հ՞առեճ։ — Թե կավատնաս քու քառսուն ախչիկներ լէ նշաներ իմ իմ քառսուն ախպոր, պզտիկ ախչիկ լէ ընձի նշաներ իմ, պաքեր իմ, իմ մատնիկ լէ էցկեր իմ մատ։

Թագավոր ըսեց.— Մկա կավդնամ օր դու ես սպանի։ Իմ քառսուն ախչիկ լէ կուրրան էրի քու ախպրտոց։

Թագավոր բերեց քառսուն օր, քառսուն ծեռք դհոլ զուռնա զարկեց, ուրախութեն էրեց, ուր քառսուն ախչիկներ լէ փսակեց ախպրտոց վրեն։

Ժուք ու ժամանակ մի մանցին օդի։ Էլան բարձան օր էրթին ուրանց պապական էրկիր։

Զոնքանջ ինգավ ետև, ըսեց.— Լաո, իդա ճամփով գացեք, էն ճամփով մ՚երթաք։

Էլան գացին։ Ճեոչ ախպրտանք դեմ առին էն ճամփով գացին, պզտիկ ախպեր ըսեց.

— Ախպրտիք, մեր զոնքանջ մըզի օսյաթ էրեց, թը՝ «Իդա ճամխով մէրթեք, էնա ճամփխով գացեք»։

Ախպրտիք պզտիկ ախպոր անգանջ չէրեցին, ըսին. «Դու վախկոտ ես, դու ի՞նչ բան կֆայմիս, մենք էն ճամփխով կէրթանք օր էրթանք էրկիր»։

Էլան գացին։ Գացին քոշկ ու սարի մե ռաստ էկան։ Տեսան օր կերակուլ էփուկ ա, փռուկ, մտան մեջ, կերան։ Ամեկ առավ զուր կնիկ ու պառկավ։ Պզտիկ ախպեր իմաստուն ա, ապա իդրան քուն կա՞։ Կտեսի օր Սիվտակ դև էնդհեն գիգա։

— Հե՞յ,— կեսա,— խողածին, օձն ուր պորտով, խավքն ուր թևով իդա տեխ չգտնվի, իմա՞լ փրթուճ մես ընձի ռաստ էկե։

Տղեն լէ կեսա.— Կեր, նոր ջքրի։

Իդհախս կղարզվին իրար։ Տղեն կզարգա, գլոխ կկտրա։

Դև կպատի, կեսա.— Օ՞խ, մեռնիմ քու խոգուն, մեկ լէ զարկ։

Օր թը զարներ, կսաղներ։

Տղեն կեսա.— Իմ գրոբ մեկ ա, չէղի էրկու։

Դև կփիթնա։ Անգնջներ կկտրա, կթալա ուր հագուբեն։

Ախպրտիք լուսուն գիմնան։ Ախպրտիք կեսին.

— Քու խեր... ի՞նչ տեսար օր չիքեր պառկիր։

Տղեն կեսա.— Չտեսեր իմ, չտեսեր իմ։

Գելին կէրթան, Կէրթան Սև դևի քոշկ ու սարին ռաստ դիգան։ Էլման կտևսին կերակուր փռուկ, կուտին, կխմին ու կպառկին։

Է՜հ, պզտիկ ախպոր քուն գիգա՞ օր։ Կտեսի հանդե Սև դևն գիգա։

Սև դևն ա, յոթ գլխանի դև ա։ Էկավ, ծառ քոքախան էրի, խարի ճժունք զարկեր ա ծառի ծեր ու էդ դևեն էկավ։

— Հե՜յ, խողածին, քըզի բռնի, ես էկա, իմ ախպոր գլոխ զարկեր իս, էկեր իս ընձի լէ՞ զարդիս։

Տղեն լէ կեսա.— Կեր, նոր ջքրի։

Իդհախս գիգան իրար։ Տղեն կզարդա, դևի յոթ գլոխ լէ կկտրա։

Կեսա.— Քու գլխուն արևուն մեռնիմ, մեկ լէ զարգ, մեկ լէ զարդ։

Կեսա։— Իմ դրոբ մեկ ա, չէղի էրկուս։

Ինդրա անգնշներ լէ կթալա ուր հագուբեն, կտանա զէդ դև կկորցու։

Ախպրտիք գիմնան, կեսին.— Վախկոտ, իսկի քնե՞ր իս։

Կեսա.— Ջքներ իմ, չքներ իմ, դե ելեք էրթանք։

Գելին դիդան։ Գիգան ու գիգան օթևան կէղին Կարմիր դևի քոշկ ու սարին։ Գիգան, էլման կերակուլ փռուկ ա, կուտին, կխմին, ամեկ զուր կնիկ կգրկա, կպառկի, խաբար չունին։

Պզտիկ ախպոր քուն կա՞։ Կտեսի օր Կարմիր դև քոքեխան էրեր ա ծառ մի ու գիգա, բոռալեն, ֆշալեն կեսա.

— Հե՜, խողածին, օձն ուր սլորտով, խավքն ուր թևով էդտեխ չօթվի, դու օդա։

Ըսեց.— Հաղր տես ընձի, հմա ինչ քութենեն գիգա, արի։

Կովան, ինչ գախ օր գուռզ կզարներ, գութնի պես կբաներ։

Պզտիկ ախպեր զարգեց դևի յոթն գլոխ լէ կտրեց, անգնշներ լէ կտրեց, թալեց հագուբեն։

Էկավ նստավ, ուր ախպրտիք իմցուց։ Ախպրտիք էլան. «Վախկոտ, էսօր իսկի քնե՞ր ես»։

Կեսա.— Ջ՜քներ իմ, չքներ իմ. ես իմա՞լ էնիմ, դու չվախենաք, ես կվախենամ։ Դե, ելեք դառնանք էրթանք։

Բարձան գացին։ Շատ գացին, քիչ գացին, աստված գինա. էկան օթևան էզան չայիրին։

Պզտիկ ախպեր ըսեց.— Ախպրտիք, արեք իմ խոսք էրեք, իդա չայիրի մեջ մի ղնեք, օտրրի մուլք ա, մի ղնեք։

Կեսին.— Հե՜, քու խեր... վախկոտ։

Բերեցին դրին մեջ չայիրին, բերին գրկեցին զուրանց կնկտիք, պառկան ուհաթան արխային։

Պառկան քնան։ Լուսցավ։ Պզտիկ ախպեր ըսեց.

— Էլեք շիտկինք։

Ախպրտիք գելնին կտեսին օր վիշաբ պատեր ա բոլոր։ Վիշաբ կաներ ա, բերի փաթթի ուր բոլոր ու պոչ դրեր ա ուր բերան։

Պզտիկ ախպեր ըսեց.— Դե, էլեք ըդոր ջուաբ տվեք, թ'էրթա։

Անդնջներ հ'մեն լցեց ախպրտոց հ'առեճ. ըսեց.— Իդա հ'մեն էրեր իմ. դուք չիմացեր իք, իդհախս էլեք իդրա ջուաբ լէ դուք տվեք, ես չկարնամ։

Ախպրտիք կծկան ու պառկան, ծեն չէլավ։ Պզտիկ ախպեր էլավ ըսեց.

— Աստծու հայվան, ճամփախ տուր օր հ'ընցինք, ախր դու ի՞նչ կուզես։

Ըսեց.— Հ'ըմնուն ճամփախ զիտամ, թ'երթան, քըզի ճամփախ չիտամ, կարող չիմ քըզի ճամփախ տամ. թըխ քու ախպրտիք ուրանց կնկտոց խետ էրթան, քըզի չիտամ։ Դու պըտի գաս էրթաս Սինամ թագավորի էվութեն հ'իմնաս, գաս ընձի էսիս, օր քըզի ճամփախ իտամ էրթաս։

Ախպրտիք գացին։ Վիշաբ ըսեց պզտիկ ախպոր.

— Քու կնիկ տուր մըր ախպեր ամանաթ։

Կեսա.— Չէ՛, կարող չիմ իտամ։

Կեսա.— Քու կնիկ տուր մըտ քու պապ ամանաթ։

Ըսեց.— Չէ՛, չըմ իտա։

—Տուր մըտ քավոր ամանաթ։

Տվեց ամանաթ ու դնաց։ Վիշար էղավ քավոր, կնիկն առեց մոտ ինք, տղեն գնաց։

Իդհախս տղեն լաց ու աղաչական ու գնաց զուր աստված կանչեց։ Շատ գնաց, քիչ գնաց, ախպրի մե գլոխ խաց կերավ, պառկավ ծառի մի տակ, քնավ։

Իմցավ, տեսավ օր վիշաբ փաթթեր ա, էլեր ա օր արծվու ծքեր ուտա։

Էլավ կտրտեց զէտ վիշաբ, թափեց էդ արծվու ծքերու հ'առջև։

Տեսավ օր արծիվ էկավ, օրթը զտղեն ուտեր, ծքեր հ'առաճ ըսին. «Էդի մըզի պրծուցե, վիշաբ, էլավ մըզի կուտեր, տղեն մըզի պրծուց»։

Արծիվն ըսեց.— Տղա, դե ուկա, տամ քըզիկ։

Ըսեց.— Աստծու հայվան, ի՞նչ պըտի քզնեն ուզիմ, ես էկեր իմ էրթամ Սինամ թագավորի էվութեն հ'իմնամ ու գամ։

Ըսեց.— Ես, վոյլա, Սինամ թագավորի արծիվն իմ, աքի ես

քըզիկ առնիմ վըր իմ թևերուն, քըզի տանիմ ծով հ'ընցուցեմ, կը-տանիմ քըզիկ սարի հ'առեճ կդնիմ, գու գնա թագավորու էվութեն հ'իմցի արի, արի ծովու պռուկ ես քըզի գընցում իգա տեխ։

Արծիվն առեց ուր թևերու վրեն, բերեց թագավորի սարի հ'առեճ։ Տղեն էր գնաց Գուլի ու Բլբուլի հ'առեճ։ Գուլ ու Բլբուլ Սինամ թագավորի կնիկն ու ախչիկն ին։

Ըսեց.— Սինամ թագավոր, հ'իմցի էլի, ես էկեր իմ քու էվութեն հ'իմնամ։

Սինամ թագավոր կեսա.— Տղա՛, դու իմ էվութեն օր հ'իմնաս, դու զքու գլոխ կիտաս ու կէրթաս։

Կեսա.— Քու քեֆն ա, ինչ կուզիզ էրա։

Կեսա.— Տղա՛, օրերուց մեկ իմ կնիկ ինչ խատար օր մշակ ըռնեցի, հ'իրկուն կնալենք մեր ծիանք, լուսներ՝ նալեր թալուկ էր. օր մի էրկու ինչ կադար ուընջբար բռնեցի, հ'ըմեն սպանեցի։ Էն մեկ օր, էն մեկ մշակ ղարաչա էր, էկավ ըսեց. «Թագավոր, հ'էսօր քու թագավորութեն տուր ընձիկ, իմ մշկութեն առ քըզիկ, օր դու հ'իմնաս քու կնկա ու ախչկա էվութեն»։ Ես էլա իմ թագավո-րութեն տվեցի մշկուն, մշկու շորեր հագա, գնացի կանա ծիանք-ներու հ'առեճ, տեսա օր թը կնիկս ու ախչիկս էկան քաշեցին ըն-ձիկ լավ մի ծեծեցին։ Կնիկս ու ախչիկս ու ես օր մշակ էի, էլանք քաշինք ծիանք, խեծանք ու քառսուն ավուր ճամփախ գացինք, էն մեկ գիշերվան մեշ գացինք։ Ձծիանք տվեցին իմ ծեռ ու մտան ուրանց սիրողներու մեշ, կերան ու խման, զարգին ու զարգվան։ Ուրանց ուրախութեն էրին, էլան խեծան։ Ես ըսեցի. «Դուք էլեք կանեք դուռ, հարի ես իգամ»։ Մտա ներս, զէրկու սիրող լէ մորթեցի, էլանք էկանք, խեծանք ու էկանք, էկանք տուն։ Էկանք տուն, զարգեցի կնկանս ու ախչկաս ըսեցի. «Ես էի ծեր խետ, ես ծեր սի-րողներ մորթիր, իմ, էկեր իմ, ես իմ մշկներու մեղք լէ առա, հ'ըմլա սպանեցի»։

Իդհախս կնիկս զարկեց ինձ, ես էղա էշ մի հ'ընգա փողցներ։ Ելան լուսուն, տեսան օրթը էշ մի հ'ընգե փողցներ։

Ըսեց. «Էս Սինամ թագավորն ա հ'ընգի փողցներ, իմ դև քուրն ա զարգեց»։ Ընդրան բռնավ էգ քուր, վարոց մե լէ էլման էկավ էլավ Սինամ թագավոր, էկա տուն։

Բերեց վարոցմը լի՝ զարդեց, էղա գավճի մէ հ'ընգա դռներ։

Քուրն ըսեց. «Էլման իմ գև քուրն ա զարգե Սինամ թագավոր հ'ընգե դռներ». զարդեց էլման էլա Սինամ թագավոր, էկա։

Սինամ թագավոր ըսեց.— Գուլ, Բլբուլ հըմա՞լ ա,— ըսեց,— տղա, իմ էվութեն քըզիկ ըսեցի, դե բիր քու գլոխ զարդիմ։

Կեսա.— Թագավոր, քու դլխուն մեռնիմ, կանի՞ ես էլնիմ գուռ ու դաունամ։

Էլավ դուռ, էլավ արծվի թևերուն, ծովն հ'ընցավ, էկավ ծովու օրթալախ, ըսեց.

— Սինամ թագավոր, քու գլոխ հան դուս։ Տղեն ըսեց.

— Դե կեցի բարով։

Թագավոր ըսեց.— Տղա՛, քու աստված սիրես, դե իշկա դիտա՛

Սինամ թագավոր զինք թալեց ծով, ըսեց.

— Էն օր իմ էվութեն իմնա, ես զիս պիտի թալիմ ծով։

Տղեն ծովն հ'ընցավ, էլավ դետին։ Շատ էկավ, քիչ էկավ՝ էկավ մըտ վիշաբ ու մըտ ուր կնիկ։

Վիշաբն ըսեց.— Գացի՞ր մըտ Սինամ թագավոր։

Ըսեց.— Խա՛, գացի։

Իմալ օր ես քըզի Սինամ թագավորի պատմութեն էրեցի, տղեն լէ էդմլա ըսեց։

Իդհախսի վիշաբ զուր շապիկ հանեց վրեցեն, էլավ խուռնիկ՝ խրեղեն ախչիկ մի։

Տղեն առավ զէդ ախչիկ լէ, առավ էրկու կնիկ։

Ընդոնք խասան ուրանց մուրազին, դու լէ խասնիս՝ քու մուրազին։